

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2019-2020 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն՝ հետևյալ մասնագիտություններով.

Մասնագիտության դասիչ	Մասնագիտություն	Տեղ
Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն	1
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում. - գործարար կառավարում - աշխատանքի տնտեսագիտություն	2
		1
Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում. - ֆինանսներ	2
Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն. - տնտեսամաթեմատիկական մեթոդներ - տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր	1
		1
Ընդամենը		8

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- 1) Դիմում ՀՊՏՀ ռեկտորի անունով:
- 2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
- 3) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
- 4) Օտար լեզվի և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
- 5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):
- 6) Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

ՀՊՏՀ-ն հայտարարում է նաև 2019-2020 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ **վճարովի** հիմունքներով ասպիրանտուրայի ընդունելություն բոլոր մասնագիտությունների գծով:

Վճարովի հիմունքներով առկա ուսուցման տարեկան ուսման վարձը կազմում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հունիսի 7-ը (ներառյալ):

Հասցե՝ ք.Երևան -25, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
հեռախոս՝ 593-454

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2019-2020 ուսումնական տարվա դոկտորանտուրայի ընդունելություն՝ հետևյալ մասնագիտություններով.

Մասնագիտության դասիչ	Մասնագիտություն	Տեղ
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում. - կառավարում	1
Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում. - ֆինանսներ - ֆինանսական հաշվառում	1 1
Ընդամենը		3

Դոկտորանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- 1) Դիմում ՀՊՏՀ ռեկտորի անունով:
 - 2) Գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը):
 - 3) Հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:
 - 4) Դոկտորական ատենախոսության պլանը:
 - 5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):
- Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հունիսի 7-ը (ներառյալ):

Հասցե՝ ք. Երևան -25, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
 հեռախոս՝ 593-454
 Ռեկտորատ